**Արձանագրություն N 2**

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

28 օգոստոսի 2023թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ Լ. Քալանթարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մկրտչյան
Ա. Ծատուրյան

Քարտուղար՝ Վ. Ղազարյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ բացվել են 2023թ. օգոստոսի 28-ին, ժամը 15:00-ին:
2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:
3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:
4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է օգոստոսի 29-ին, ժամը 15:00-ին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2023թ. օգոստոսի 30-ին, ժամը 14:00:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

30 օգոստոսի 2023թ.
ժամը՝ 14:00

6. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում 2023թ. օգոստոսի 29-ին, ժամը՝ 15:00-ին:
7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Գրողների 18, հեռ. 093454747 |
| 2 | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5, հեռ. +374 43 41 21 01 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| *Չափաբաժնի համարը* | *Գնման առարկայի անվանումը* | *Չափման միավորը* | *Քանակը* | *Գնման առարկայի գնման հայտով հաստատված գնման ընդհանուր գինը* | *Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը* (ՀՀ դրամ)* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ | | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ | |
| | | | | | **Գնային առաջարկը** | | **Գնային առաջարկը** | |
| | | | | | **առանց ԱԱՀ** | **ներառյալ ԱԱՀ** | **առանց ԱԱՀ** | **ներառյալ ԱԱՀ** |
| 1 | Ճաշկերույթների կազմակերպում | դրամ | 1 | 938400 | 782000 | 938400 | 925550 | - |
| 2 | Ճաշկերույթների կազմակերպում | դրամ | 1 | 312800 | 260000 | 312000 | 308520 | - |

***Եթե մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը:**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

10. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի, որը չի ներկայացվել:

11. Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

12. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2023թ. սեպտեմբերի 1-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

01 սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 12:00

13. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է իրական շահառուների մասին հայտարարագիրը: ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, ուստի հանձնաժողովը որոշեց ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող:

14. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2023/4>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ճանաչել ընտրված մասնակից

- ԱՆԳԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,

- մերժել մյուս մասնակցի հայտը, մասնավորապես՝

- «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ -ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

15. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

16. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | ---------------------------- | Լ. Քալանթարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ---------------------------- | Մ. Մկրտչյան |
| | ---------------------------- | Ա. Ծատուրյան |
| Քարտուղար՝ | ---------------------------- | Վ. Ղազարյան |